Աշոտ Ավետիսյան (ՌԴ), ԵՊՀ Սոցիալական փիլիսոփայության մագիստրոս (ՀՀ), APU Կազմակերպությունների առաջնորդության մագիստրոս (ԱՄՆ), ՀԱԵ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի «Տապան» հայկական թանգարանի տնօրեն

ՌԴ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Ինչպես արդեն գիտաժողովի կազմկոմիտեն դիպուկ նկատել է գիտաժողովի հրավերքում տեղ գտած հիմնախնդրի նկարագրության մեջ, ռուսաստանաբնակ հայության համար միմյանց հետ շփվելու և հարաբերվելու, ինչպես նաև, ի մասնավորի, հային հայ պահելու, և՛ ազգային, և՛ հոգևոր արժեքներով կրթելու և դաստիարակելու մարտահրավերը հառնել է իր ողջ բարդությամբ: Մասնավորապես նշվում է, որ «չնայած Ռուսաստանի Դաշնությունում մեծաթիվ հայկական համայնքի առկայությանը, այն համարվում է պակաս կազմակերպված, տեղի հայերի ինքնությունը՝ ենթադրաբար ավելի վտանգված, և երբեմն նույնիսկ քննարկվում է «սփյուռք» հասկացության գործածության նպատակահարմարությունը ՌԴ հայերի պարագայում»:

Ռուսաստանի Դաշնությունում հայկական կրթական և մշակութային հաստատությունները մասնավորապես, իսկ ՌԴ-ում բնակվող ազգությամբ հայ քաղաքացիների կրթական և մշակութային կյանքն ընդհանրապես, կարիք ունեն խորը և համակողմանի ուսումնասիրության, ինչի համեստ փորձը ստորև ներկայացնում եմ ձեր ուշադրությանը՝ որպես մոդել ընդունելով Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի «Տապան» հայկական թանգարանի և «Հայորդյաց տուն» հայեցի դաստիարակության կենտրոնների կրթական և մշակութային գործունեությունը: Համառոտակի ներկայացնելով վերոնշյալ երկու՝ կրթական և մշակութային, միևնույն ժամանակ համայնքային և համազգային նշանակության հաստատությունների գործունեությունը՝ Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքի համար առանձնացնում ենք հետևյալ տիպական դիտարկումները՝ ելնելով կրթական, արժեքային, մշակութային, ինչպես նաև հայ ազգային ինքնության բաղադրատարրերից.

1. Մշակույթի և կրթության սահմանում կամ վերջիններիս գործունեութենական և մեթոդաբանական դաշտի հստակեցում: Առաջին հերթին նկատի ունենք «Մշակույթ» և «Կրթություն» հասկացություն-

ների սահմանումը, որոնց առկայության դեպքում կիստակեցվի ինչպես մշակութային, այնպես էլ կրթական գործունեությամբ զբաղվող անհատների և կառույցների մեթոդաբանական դաշտը և թիրախ լսարանը:

Այստեղ առաջնահերթ խնդիր են տվյալ գործունեությամբ զբաղվելու իրավասու գործող անձանց և կազմակերպությունների, ինչպես նաև վերջիններիս որակավորմանն առնչվող չափանիշների և հարացույցների սահմանումը և հստակեցումը: Եթե որևէ անձ կամ կազմակերպություն պետք է իրականացնի հայ մշակույթի կամ կրթության իրականացում, ապա ենթադրվում է, որ այն կամ նա պետք է ունենան ոչ միայն համապատասխան կրթություն և որակավուրում, այլև հստակ և հաստատված մեթոդաբանական բազա: Ասել է թե զուտ գործարարը իրավունք չունի ներկայացնելու հայակական մշակույթը՝ իրեն համարելով մասնագետ-դասավանդող:

Ցավոք, նմանատիպ հիմնախնդիրները տեղ են գտել ռուսաստանյան հայկական սփյուռքի իրականության մեջ, որպես ազգային անվտանգության և կրթամշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրներ, քանի որ ինչպես կրթությունը, այնպես էլ մշակույթը չեն հանդուրժում ամենաթողություն, որի արդյունքում կունենանք անգրագետ հայորդիներ, եթե այդպիսիք կարող են համարվել, և մշակութային դիակներ:

2. Եկեղեցու և պետության դերերի հաստակեցում. Տարանջատում և միացում: Այս ոլորտը թերևս ամենահակասականն է, քանի որ մի կողմից մենք ունենք իրավական հիմքով տարանջատված եկեղեցի-պետություն հարաբերություններ, մյուս կողմից, ի գիտակցումն, նրանք չեն կարող գոնե սփյուռքում գործել անջատ՝ հիմք հանդիսանալով առանց այն էլ չմիավորված ռուսաստանյան սփյուռքի տարանջատմանը:

Դեռ ավելին, որպես կրթամշակութային ոլորտի հիմնախնդիր, հարկ է առանձնակի անդրադառնալ համատեղ գործելու հրամայականին՝ որպես երաշխիք ազգային հոգևոր արժեքների և կրթամշակութային գործունեություն իրականացնելու անհրաժեշտության: Այս տեսակետից այժմ ունենք դեռևս չհամակարգված դաշտ, որի արդյունքում իրականացվող միջոցառումները հաճախ կրկնվում են, կամ այս կամ այն կողմը լիովին տեղյակ չէ մյուսի ծրագրերից: Արդյունքում տուժում է շարքային հայրենակիցը, որը իր փնտրտուքներում այդպես էլ չի հանգում մեկ կենտրոնի:

Մյուս կողմից՝ դիվանագիտական և նվիրապետական կենտրոնները, միաժամանակ իրականացնելով մշակութային դիվանագիտություն, այն է՝ ազգային հոգևոր արժեքների և ավանդույթների տարածում և հայոց պետականության ամրապնդում, բախվում են և՛ քաղաքականապես, և՛ հոգևոր-մշակութային առումով բազմատարր

հայորդիների բանակի, որն առաջադրում է իր պահանջները և բարդույթները: Իսկ վերոնշյալ խնդիրներին ուղղված լուծումների առաջադրումն արդեն սկսվել է սույն թվականի սկզբին նոր դիվանագիտական առաջնորդի նշանակմամբ և կայուն համագործակցության ակնկալիքով սկիզբ դրված երկխոսությամբ՝ որպես նախորդ սերնդի ծավալած համագործակցության տրամաբանական շարունակություն:

3. Հայկական «Տապան» թանգարանը և «Հայորդյաց տուն»-ը՝ որպես մշակութային և կրթական դիվանագիտության հաստատություններ:

Ընդհանրապես Հայորդյաց տները՝ որպես հայեցի դաստիարակության հոգևոր կենտրոններ և մշակութային օջախներ, ինչպես նաև թանգարանները՝ որպես մշակութային և կրթական հաստատություններ, առավելապես նպատակ ունեն իրականացնելու մշակութային և կրթական դիվանագիտություն: Իսկ ի՞նչ է Մշակութային կամ կրթական դիվանագիտությունը:

Անդրադառնալով արևմտյան տեսական մտքին և ժամանակակից սոցիալ-փիլիսոփայական, մշակութային և քաղաքական մտքի ուսումնասիրությանը՝ կարող ենք ամրագրել, որ քսանմեկերորդ դարում, ի տարբերություն պետական կամ հանրային դիվանագիտությանը, ի շարս ուժի կամ զենքի իրավունքին, մեծագույն պահանջարկ և արդարացված կիրառելիություն է ստանում Մշակութային դիվանագիտությունը, որն իրականացվում է ինչպես անհատ ներկայացուցիչների, առաջնորդների և հայտնի դեմքերի, այնպես էլ մշակութային, կրթական և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող այլ կազմակերպությունների կողմից՝ ի նպաստ այս կամ այն արժեքային համակարգի, սկզբունքների կամ տեսակետների տարածման և պահպանման:

Մեր պարագայում, մասնավորապես սփյուռքում, հայ արժեհամակարգի և հոգևոր-մշակութային արժեքների և՛ ժառանգության, և՛ պահպանման խնդիրը, ի զորակցություն, հաճախ էլ առավել արդյունավետ իրականացնում են հենց մշակութային, կրթական կառույցները, միավորները, որոնց թվում կարելի է առանձնացնել նաև թանգարաններն ու Հայորդյաց տները, մշակութային, հասարակական ոչ կառավարական կազմակերպությունները, եկեղեցին, թատրոնն ու կինոն: Մոսկվայում նոր թափ ու ծաղկում է ստացել հայապահպանության առաքելությունը, «Տապան» հայկական թանգարանը և «Հայորդյաց տուն» հայեցի դաստիարակության կենտրոնը, որոնք գործում են Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի հովանու ներքո, իրականացնում են ոչ միայն ազգապահպան, այլև մշակութային դիվանագիտական առաքելություն:

Վերջինս կայանում է, մասնավորապես թանգարանի՝ ի կոչումե տրված գործառույթներում, որոնք ներկայանում են պատմամշակու-

թային, հոգևոր և նյութական արժեքների պահպանության, ժառանգության հաղորդման և փոխանցման, ինչպես նաև կրթական և լուսավորչական ծառայության մեջ: Օտար պետության կեցության շրջանակներում հայ ազգը բազմիցս է ցուցաբերել միավորվածություն, սակայն միևնույն ժամանակ մենք ցուցաբերել ենք նաև անտարբերություն մեր աժեքների, կյանքի, հոգևոր և նյութական ժառանգության նկատմամբ՝ հոգալով միայն նյութական պետքերը:

Դեռ ավելին, իրականացնելով մշակութային առաքելություն, վերոնշյալ կրթօջախները, որոնցում խտացված են ազգային կրթական առաքելություն իրականացնող նաև այլ կառույցների և անհատների համագործակցությունն ու աջակցությունը, դեմքեր են ռուսաստանյան համայնքում հայի տիպի, կերպարի, նրա պատմական, մշակութային և նյութական ժառանգության ադեկվատ ներկայացման գործառույթում: Լինելով բազմադարյան ժառանգության կրող՝ մենք՝ հայերս, պարտավոր ենք ոչ միայն պահպանել մեր հայոց լեզուն, քրիստոնեական արժեքները, պատմական հայրենիքի վերականգման և պատմական արդարության գաղափարները, այլև ճշմարտացիորեն գոյակցել այլ ազգերի շրջանակներում և կողքին թե՛ անհատապես և թե՛ կազմակերպչական մակարդակով՝ այդ ամենը միասին ներկայացնելով:

Թանգարաններն ու մշակութային կրթական հաստատություններն ունեն թե՛ քաղաքական անկախություն, թե՛ բազմամշակութային կոթող լինելու առաքելություն և հանդես գալով որպես իրական միասնական հավաքատեղի տվյալ ազգի և մշակույթի համատեքստում՝ հենց նրանց է վերապահված միավորման և համախմբման առաքելությունը իրականացնելու պատիվը:

4. Ովքե՞ր են ռուսաստանյան սփյուռքահայերը և ինչպիսի՞ ուղղակի կապ և պայմանավորվածություն կա նրանց և ՀՀ-ում իրենց տեսակների արժեքային և վարքաբանական առանձնահատկությունների միջև: Լեզու, հավատք, պատմական հիշողություն կամ արդարություն /Հայոց ցեղասպանություն/, ընտանիք, հայրենիք և հայրենասիրություն/Արցախյան հիմնահարց կամ անկախություն/, մարդու իրավունքներ և ազատություններ կամ քաղաքացիություն, և վերջապես նոմինալ հայեր: Ահա այն լակմուսները, որոնց պատախանելով միայն կիմանանք մեր արժեքաբանական ուղղվածությունը:

Ամփոփելով ռուսաստանյան հայկական սփյուռքում հայ ազգային ինքնության բաղադրատարրերի և արժեքային համակարգին վերաբերող հիմնահարցերի քննարկումը՝ անդրադառնանք հայի տեսակի, նրա արժեքային և գաղափարական հենքերի, ինչպես նաև մշակութային, լեզվական և հայրենական պատկերացումների վարքաբանական առանձնահատկություններին:

Այսպիսով՝ ունենալով ներքին բազմատարրությամբ աչքի ընկնող ռուսաստանյան սփյուռք, ուր յուրաքանչյուրն անկախ է, առկա է առնվազն միգրացիոն երեք սերունդ՝ մինչև իննսունական թվականներ կամ բնիկներ, իննսունից երկու հազարականների սկիզբ եկածներ և վերջապես վեջին տասը-տասնհինգ տարիներում ներգաղթյալներ, որոնցից մեծամասնությունը եկել է կարճ ժամանակով ապրուստ վաստակելու: Արդյունքում՝ տարրակարծություն, բազմափեղկվածություն, քաղաքական, հասարակական ընդգծված պասիվություն, հաճախ նաև անտարբերություն, մշակութային, լեզվական, հոգևոր-արժեքային բազմաբևեռ և հիմնականում սիրողական հայի մակարդակի իմացություն:

Այս ամենը հաշվի առնելով՝ յուրաքանչյուր անհատ և իրավաբանական անձ իրեն համարում է հայ. ազգային արժեքների, համայնքային մտածողության, քաղաքական, հասարակական, լեզվական և լեզվաբանական, հոգևոր-մշակութային և այլ արժեքների «իրական» կրող և տարածող՝ միևնույն ժամանակ քննադատելով մյուսներին և որպես բոյկոտ չմասնակցելով մյուսների նախաձեռնություններին: Դարձյալ արդյունքում համայնքային կյանքի կարևորագույն բաղադրիչները՝ միասնականությունը և միավորվածությունը, կաղում են:

Այս ոլորտի համայնքային հիմնախնդիրներից է նաև կրթական բլոկի ոչ միատարր և չհամակարգված լինելը: Չունենք ՀՀ համապատասխան մարմինների կողմից արտոնված մեթոդաբանական բազա, որը հիմք կհանդիսանար միասնական ճակատով լուսավորչական գործունեություն իրականացնելու համար, և տեղ չէր մնա ինքնակոչ և ոչ պրոֆեսիոնալ գործունեության համար:

Դեռ ավելին, դեռևս լուծած չլինելով իրենց ողնաշարային հարցը՝ մնա՞լ, թե՞ գնալ, ռուսաստանահայ ընտանիքներից շատերը կաղում են աճող սերնդի քաղաքացիական ինտեգրման, կրթական և մշակութային, ինչպես նաև հասարակական ներգրավվածության հարցում՝ ծնողների մակարդակով իսկ մնալով իրենց եկած տարեթվի կրթական և արժեքային համակարգերի մակարդակում: Այս հիմնախնդիրը հիմքային է ինչպես երիտասարդների հայեցի դաստիարակության, այնպես էլ նրանց քաղաքացիական պատասխանատվության բարձրացման պարագայում՝ մղելով անտարբերության և կեղծ ու հեռակա հայրենասիրության:

Այլ կարևորագույն հիմնախնդիր է նաև հայրենիքի, հայոց ցեղասպանության, ճշմարիտ հայրենասիրության և իրական քաղաքական-քաղաքացիական գործունեության համալիր ճգնաժամը, ուր տիրում է համատարած անկրթություն: Արդեն ապրիլի 25-ին որևէ մեկին հետաքրքիր չէ հայոց ցեղասպանության հիմնախնդիրը, որևէ ընտրություն ՀՀ-ում դեռ հիմքում հետաքրքիր չէ և չի էլ կարող լինել՝ հիմնվելով «ամեն ինչ հին ձևով է լինելու» կարգախոսի վրա, իսկ

ընթացիկ շոու ծրագրերին և համերգներին մասնակցելու առումով մեծ մասամբ հանրությունը ցուցաբերում է նախանձելի կազմակերպվածություն: Միայն Սուրբ Զատիկին, Սուրբ Ծննդին, Ապրիլի 24-ին են հայերը զարթնում որպես ազգի ներկայացուցիչ և հայրենասեր:

Դրական և հուսադրող կարելի է համարել ապրիլյան քառօրյա պատերազմական գործողությունների ժամանակ դրսևորված իրական մասնակցությունը և հայրենասիրական մղումները, որոնց արդյունքում ՌԴ-ից հայրենիք և ճակատ ուղարկվեցին ինչպես դրամական, այնպես էլ ռազմական օգնություն: Իսկ երիտասարդների ռազմահայրենասիրական կարգախոսները և սոցիալական ցանցերում նրանց հեռակա պատերազմնեները հուսադրող լիցք են հաղորդում վաղվա օրվա կապակցությամբ. դեռ ամբողջապես չի բարոյազրկվել ռուսաստանահայը և հարկ եղած դեպքում կարող է իր՝ ակտիվ մասնակցությունը բերել հայրենիքի պաշտպանությանը....

5. Ինչևէ, ամփոփելով վերոնշյալ քառակի շարադրանքը՝ կարող ենք անել հետևյալ եզրակացությունը. ռուսաստանյան հայկական սփյուռքում մշակութային և կրթական կազմակերպությունները կայացման փուլում են, ինչի ընթացքում հայեցի դաստիարակության, մշակութային և հոգևոր-ազգային արժեքների քարոզչության և պահպանության, ինչպես նաև հայրենասիրական դաստիարակության առաքելությունը իրականացվում է ոչ միասնաբար և միավորված: Առաջիկա երեք-հինգ տարիների ընթացքում վերջնականապես կձևավորվի նշված դաշտում հիմնական դերակատարների ցանցը ՀՀ-ից, ասել է՝ հայրենիքից ստանալով անհրաժեշտ մեթոդաբանական աջակցություն: Իսկ վերջին ամիսների աշխարհաքաղաքական գործընթացները մեկ անգամ ևս ապացուցում են մշակութային դիվանագիտության հրատապ անհրաժեշտությունը ինչպես պետությունը, այնպես էլ զուտ ազգայինը ներկայացնելու առաքելության մեջ թե թևի քաղաքական դիվանագիտությանը:

Ашот Аветисян (РФ), *Армянские образовательные и культурные организации РФ*.

Ashot Avetisyan (RF), *Armenian Educational and Cultural Organizations of the RF*.